

ՊԱՏՐԻԱՐԲ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ապրիլ 20-22, 1993, Երուսաղեմի Սէյնթ Ժօզեֆ հիւանդանոցին մէջ, ֆիզիքական քննութեանց ենթարկուելէ յետոյ, բժիշկ Ապտուլահ Խուրիի եւ բարեկամ բժիշկներու թելադրութեամբ, կարգադրութիւն եղաւ որ Պատրիարք Սրբազան Հայրը Բարիզ փոխադրուի։ Ապրիլ 25ին նախագահեց ժառ. Վարժարանի աշակերտներու կազմակերպած թատերական յաջող ներկայացման (Մուշեղ Իշխանի "Կիլիկիոյ Արքան"), եւ Ապրիլ 27, երեքշաբթի առաւօտ, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի մեկնեցաւ Բարիզ։ Տէր. Վիգեն Կարապետեանի կարգադրութեամբ, նոյն իրիկունը Բարիզի Նէֆէր հիւանդանոցը փոխադրուեցաւ, եւ Ապրիլ 30, Ուրբաթ օր, գործողութիւնը (պրոսթաթի) կատարուեցաւ յաջողութեամբ։

Ըստ ծրագրի, Պատրիարք Սրբազան Հայրը Ապրիլ 29ին Բարիզէն պիտի մեկնէր դէպի Սուրբ Էջմիածին, եւ Մայիս 6-26 պիտի գտնուէր Գալիֆօրնիա եւ Նիւ Եօրք, Ս. Վարդան Մայր Տաճարի 25 ամեակի հանդիսութեանց մասնակցելու համար։ Նախապէս հաղորդուած էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, նաեւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, եւ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամեանին, Պատրիարք Սրբազան Հօր ֆիզիքական անակնկալ կացութեան մասին։

Պատրիարք Սրբազան Հօր խնդրանքով, Բարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ մէջ եւ "Յառաջ" թերթի միջոցաւ ծանուցուեցաւ որ բարեկամներ չմտահոգուին, հեռաձայնով կամ այլ կերպերով իրենց ցաւակցութիւնը յայտնելու, ապափինման այս շրջանին։

Մայիս 24ին Պատրիարք Սրբազան Հայրը Երուսաղեմ վերադարձաւ։ Եւ ըստ

Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի կարգադրութեան (որ օղակայան դիմաւորելու եկած էր, ինչպէս նաեւ բժիշկ Ապտուլահ Խուրին, եւ Պատրիարք Սրբազան Հօր անմիջական ընտանիքէն անդամներ) օղակայանէն Վանք ժամանելուն, գիշերուան ժամը 8.30ին, Պատրիարք Սրբազան դիմաւորուեցաւ Միաբանութեան անդամներուն, աշակերտութեան եւ վանքին մեծ դրան մուտքին հաւաքուած ժողովուրդին կողմէ, որոնք "Հրաշափառ" ով մուտք գործեցին Մայր Տաճար։ Ս. Գլխադրի մատրան մէջ ծնկաչոփ իր աղօթքը ընելէն եւ խնկարկելէն յետոյ, յառաջացաւ Աւագ Խորանի առաջ, "Ուրախ Լեր" շարականի երգեցողութեամբ եւ "Ուրախ եղէ ես ոյժ ասէին ցիս, ի տուն Տեառն երթիցուի մեք" սաղմոսի փոխասացութեամբ։

Ապա թափօրով Պատրիարքաբան բարձրացան ամենքը, ուր Լուսարարապետ Սրբազանը իր բարի մաղթանքները արտայայտեց յանուն Միաբանութեան եւ ժողովուրդին, թելադրելով որ Պատրիարք Սրբազան Հայրը աւելի հոգատար լինի իր առողջութեան, իր աշխատանքի բեռը թեթեւեցնելով։ Պատրիարք Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան, եւ ակումբներու վարչութեանց եւ ժողովուրդի, իրենց աղօթքներուն եւ մաղթանքներուն համար։ Յիշեց նաեւ հոգատար բժիշկները եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եւ հոգեւորական եղբայրներ եւ բարեկամներ, որոնց մտահոգութիւն պատճառուած էր անակնկալ այս գործողութեան անհրաժեշտութեամբ։ Պատրիարք Սրբազան Հայրը գուարթախոհութեամբ շեշտեց որ իր կեանքին մէջ առաջին անգամն էր

որ "բժշկական գործողութեան ենթարկուած էր, եւ գրեթէ մէկ ամիսով առանձնացած":

Եւ այս պատեհութեամբ կարողացած էր հանդիման գիրքեր կարդալ՝ 1500 էջ, եւ վերանայիլ "Կոմիտասի Հանճարը" իր աշխատասիրութեան երկրորդ հատորի ձեռագիրը: Այս ամբողջ ներկաները առանձնապէս մօտեցան Պատրիարք Սրբազան Հօր, որ գուարթ տրամադրութեամբ եւ շնորհակալութեամբ

ընդունեց բոլորին մաղթանքը: Բարի գտնուած շրջանին, Պատրիարք Հայրը առիթ ունեցաւ տեսակցելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառին հետ, որ նոյնպէս ստիպողաբար բժշկական ֆնմութեանց ենթարկուեցաւ, հոգատարութեամբ Տֆ. Վիգէն Կարապետեանի, եւ յետագեց ղեպի էջմիածին իր ճամբորդութիւնը, եւ ապաֆինման շրջանէ մը յետոյ վերադարձաւ իր Միաբանութեան, Անթիլիաս:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Սրբոց Թարգմանչաց Մանկապարտեզի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Մայիս 30ին, ժառ. Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ դպրոցի Տեսուչ Գեորգի Ս. Կիրեղ Եպս. Գաբրիէանի: Մանկապարտեզի 36 մանուկներ, իրենց ուսուցիչներուն ղեկավարութեամբ, գուարճացուցին իրենց ծնողները եւ ներկաները իրենց երգերով, պարերով եւ արտասանութիւններով: Անոնցմէ տասը շրջանաւարտութեան վկայական ստացան տեսուչ Սրբազանի ձեռքէն:

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ 6 Յունիս, Կիրակի երեկոյեան ժամը 6.30ին, Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր: Ներկայ էին Միաբանութեան անդամներ, աշակերտութեան ծնողներ եւ կոկիկ հասարակութիւն մը:

Յայտագրին առաջին մասին մէջ աշակերտներ երգեցին եւ արտասանեցին,

եւ աւարտական դասարանը (երեք մանչ եւ երկու աղջիկ) ներկայացուց Անի քաղաքին քաղաքական, պատմական եւ ճարտարապետական արժէքները: Տեսուչ Սրբազանի տարեկան տեղեկագրէն յետոյ, հինգ շրջանաւարտ աշակերտներ ստացան իրենց վկայականները: Իւրաքանչիւր դասարանի յաջողագոյն աշակերտներ ստացան իրենց մրցանակները:

Պատրիարք Սրբազան Հայրը իր յորդորական խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը գիտութիւն եւ ուսում առնելուն հետ նաեւ կրթութիւն, դաստիարակութիւն ստանալուն: "Ուսում ունի քայց կրթութիւն չունի" խօսքը կ'ակնարկէ յարգանքին եւ հաւատարմութեան, զոր անհատ մը պէտք է ունենայ բարոյական եւ կրօնական հաւատալիքներու եւ սկզբունքներու հանդէպ: Ո՞վ կրնայ եւ ո՞վ պէտք է կրթութիւն տայ: Ընտանի՞քը, դպրո՞ցը, պետութիւնը, եկեղեցի՞ն: Երուսաղէմի մէջ պարտականութիւնն է այդ՝ գործակցաբար ընտանիքին, Սրբոց Յակոբեանց Վանքի Դպրոցին եւ եկեղեցիին, Միաբանութեան: